

ԶԵՄՈՎՐԻԱՆ՝ ԶԵՆՈՐԻԱՆ՝ ԹԵ՛Ն ՆՄՈՐԻԱ

Շ. Վ. ՍՄԲԱՏՅԱՆ

Խաչիկ վարդապետ Դավյանը 1897 թ. հրապարակեց Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» տպագիր հրատարակություններից դուրս մնացած մի փոքրիկ հատված¹։ Ինչպես հայտնի է, «Աղվանից աշխարհի պատմություն» այն ժամանակ ունեցել է երեք հրատարակություն, նրա գրաբար բնագիրը 1860 թ. հրատարակվել է Մոսկվայում և Փարիզում², իսկ 1861 թ. այն լույս է տեսել ռուսերեն³։ Վերջերս այն թարգմանվեց նաև անգլերեն և աշխարհաբար⁴։

Ինքնըստինքյան հասկանալի է, որ վերջին թարգմանությունների հեղինակները չէին կարող անտեսել և Դավյանի հայտնաբերած և հրապարակած հատվածը և, անշուշտ, ճիշտ են վարվել՝ բնագիր մուծելով ընթերցողին անճանոթ մնացած այդ հատվածը⁵։ Սակայն աշխարհաբար թարգմանության մեջ, որ դժբախտաբար կատարված է շատ հապճեպ, կան մի շարք անճշտու-

¹ «Արարատ», 1897, ապրիլ, էջ 161—163։

² Մովսեսի Կաղանկատուացու Պատմութիւն Աղուանից աշխարհի», ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860, «Պատմութիւն Աղուանից, արարեալ Մովսիսի Կաղանկատուացու», ի լոյս ընծայեաց հանդերձ ծանոթութեամբ Կ. Վ. Շահնազարեան, Փարիզ, 1860։

³ «История Агван Мойсея Каганкатваци, писателя X века», перевод с армянского К. Патканяна, СПб., 1861.

⁴ «The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranc'i», by C. J. F. Dowsett, London, 1961, Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը և ծանոթագրությունները Վարդ Առաքելյանի, Երևան, 1969։

⁵ Այստեղ անհրաժեշտ ենք համարում հիշեցնել, թե ի՞նչ է գրում Կ. Վ. Տրեվերը այդ հատվածի վերաբերյալ. «Сличение рукописей Истории Албании Моисея Каланкатуйского привело Т. Тер-Григоряна к ряду интересных наблюдений... Выяснилось также, что в печатных изданиях текста и в рукописях (Sic) недостает в III книге описания событий 835—840 гг. Оказалось, что из древней рукописи выпали два листа, что не было замечено переписчиками. Но эти два листа были обнаружены в Матенадаране и изданы архимандритом Хачиком Дадяном» (К. В. Тревер, Очерки истории и культуры Кавказской Албании. М.—Л., 1959, стр. 13). Անհրաժեշտ է նշել, որ թեև իրոք «Աղվանից աշխարհի պատմության» Մոսկվայի և Փարիզի հրատարակություններից և Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանությունից այդ հատվածը դուրս է մնացել, բայց այն պահպանվել է մի շարք ձեռագրերում։ Խ. Դավյանը, ինչպես արդեն նշեցինք, դեռ 1897 թ. այն հրատարակել է, քաղելով Երկրորդ խմբի ձեռագրերից №№ 633 և 1721 (ըստ իր իսկ խմբավորման), որոնց արդի համարներն են համապատասխանաբար՝ 2561, 1725։ Ուրեմն թյուրիմացություն է Կ. Տրեվերի այն պնդումը, թե այդ հատվածը չկա նաև ձեռագրերում։ Հասկանալի չէ նաև, թե ինչպես է Կ. Տրեվերն այդ ամենը վերագրում Տ. Տեր-Գրիգորյանին, երբ հայտնի է, որ ձեռագրերն իրար հետ համեմատել, նրանց միջև եղած տարբերությունները նկատել և մինչև այդ անհայտ մնացած թերթերը հրատարակել է Խ. Դավյանը։

թյուններ, որոնցից մի քանիսի վրա մենք ժամանակին ուշադրություն ենք հրավիրել⁶:

Այժմ անհրաժեշտ ենք համարում սրբագրել մի ուրիշ թյուրիմացություն ևս, որ տեղ է գտել աշխարհաբար թարգմանության մեջ:

Խ. Դադյանի հրապարակած հատվածի մեջ (գիրք Գ, գլուխ Ի) կա այսպիսի մի նախադասություն. «Այլ յԲ. Ճ. Ձ. է. թուականին Հայոց (838) Արահամ Ամիրմամնի, գնա դօրու մեծաւ յաշխարհն հոռոմոց և էառ ղմեծ քաղաքն զԵմորիայ, սրով և գերութեամբ: Եւ անտի դարձաւ ի բնակութիւն իւր, սա է Արուսահակն»⁷: Վ. Առաքելյանն այս նախադասությունը թարգմանել է հետևյալ կերպ. «Բայց հայոց երկու հարյուր ութսունյոթ թվականին Արահամ ամիրմամնին մեծ զորքով գնում է Բյուզանդիա և սրով ու գերությամբ գրավում է Ջեմովրիա մեծ քաղաքը, այնտեղից դառնում է իր բնակավայրը»⁸:

Քաղաքի անվան մեջ «զ» նախդիրը, որն այստեղ ուղիղ խնդիրը որոշյալ դարձնող ցուցիչն է, զարմանալիորեն ընդունվել է որպես քաղաքի անվան սկզբնատառ և Եմորիան դարձել է Ջեմովրիա:

Ջարմանալի է նաև թե ինչու թարգմանիչը ուշադրություն չի դարձրել, որ Խ. Դադյանի հրատարակած վերոհիշյալ հատվածում քաղաքի անունը գրված է զԵմորիայ ձևով: Այս աստիճան արհամարհել նախորդ և ժամանակակից ուսումնասիրողների աշխատանքը, իհարկե, չի կարելի⁹: Բայց այս դեռ բոլորը չէ: Այս սխալն իր հերթին նոր թյուրիմացության աղբյուր է հանդիսացել: Բանն այն է, որ «Ջեմովրիա» բառը աստղանիշով ծանոթագրված է տողատակում և այն էլ ահա թե ինչպես. «Պետք է լինի «Ջենորիա» Եփրատ գետի ափին. բյուզանդական ամրոց քաղաք է, որ կառուցել է Ջենորիա կայսրուհին» և հղվում է՝ տե՛ս «Պրոկոպիոս Կեսարացի», Երևան, 1967 թ., էջ 181, ճանոթ. 17¹⁰:

Եվ բոլորովին իզուր է այս հղումը: Ո՛չ Պրոկոպիոս Կեսարացին, ո՛չ էլ նշված ծանոթությունը որևէ հիմք չեն տալիս Վեմորիայի փոխարեն Ջենորիա առաջարկելու համար, որ միանգամայն ապակողմնորոշում է ընթերցողին:

Բայց ա՛յ, եթե թարգմանիչը Պրոկոպիոս Կեսարացուն դիմելու փոխարեն մի փոքր հավատ ընծայեր Խ. Դադյանին կամ, հակառակ դեպքում, դիմեր հայ պատմիչների օգնությանը, ապա հնարավոր է, որ այդ թյուրիմացությունը տեղի չունենար: Բանն այն է, որ «Աղվանից աշխարհի պատմությունից» վերևում բերված նախադասության մեջ ակնարկված է 838 թ. արաբական արշավանքը դեպի Բյուզանդիա, Ամորիա ամրոցի գրավումն ու նրա բնակիչների գերեվարությունը: Արաբական այս արշավանքը լավ հայտնի է

⁶ Շ. Վ. Սմբատյան, Մի քանի ճշգրտումներ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» բնագրի մեջ («Պատմա-բանասիրական հանգես», 1972, № 1, էջ 174—191), տե՛ս նաև նույնի՝ Երկու ճշգրտում Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմության» բնագրում («Պատմա-բանասիրական հանգես», 1973, № 1, էջ 185—193):

⁷ «Արարատ», 1897, ապրիլ, էջ 162:

⁸ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 259:

⁹ Պետք է արժանին մատուցել «Աղվանից աշխարհի պատմության» անգլերենի թարգմանիչ Ջ. Դաուսենթին, որը բնագրի մի շարք մութ ու խրթին նախադասությունները ճիշտ է հասկացել: Այս դեպքում եւ Ջ. Դաուսենթը ճիշտ է հասկացել, թե այդ որ քաղաքի մասին է խոսքը և նրա թարգմանության մեջ գրված է ճիշտ—Emovria (Amorium): Տե՛ս նշվ. աշխ., էջ 217:

¹⁰ Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 259:

պատմությունից, Արաբ պատմիչներ Յակուբին, Մասուդին և, հատկապես, Տարարին¹¹, բավական մանրամասն վկայություններ են թողել այդ մասին:

Մովսես Կաղանկատվացու հիշատակած Աբրահամ ամիրումինը Մամուն խալիֆի եղբայրն է, նույն ինքը Մութասիմ խալիֆը (836—842), որ մինչ այդ Հայտնի էր նաև Աբու Իսխակ կամ Աբու Սահակ անունով, ինչպես քիչ ներքևում վկայված է նաև «Աղվանից աշխարհի պատմության» մեջ: Մութասիմ խալիֆը լսելով, որ հույները զորավել են Ջապետրա քաղաքը և նրա արաբ բնակչությունը գերի վարել՝ վսեթխնդրության կատաղի մոլուցքով բռնված հրամայում է մեծ զորք հավաքել և, ինչպես Մովսես Կաղանկատվացին է վկայում, «դորու մեծաւ» շարժվում դեպի Բյուզանդիայի սահմանները: Նրա բազմահազարանոց զորքը, որի թիվը սղբյուրների մեջ տատանվում է 200000-ից մինչև 500000, 838 թ. օգոստոսի 1-ին պաշարեց բյուզանդական շքեղ և այն ժամանակ զրեթե անառիկ համարվող Ամորիա ամրոցը¹²: Մոտ երկու ամսվա պաշարումից հետո միայն նրան հաջողվեց գրավել այն: Մութասիմը կողոպտեց Ամորիան, պարիսպներն ու դարպասները խորտակել տվեց, իսկ բնակչությանը գերի վարեց¹³: Տարբեր ժամանակներում դժպի Ամորիա ձեռնարկված արշավանքների մասին տեղեկություններ են պահպանվել, թեև համառոտ, նաև հայ այլ պատմիչների մոտ: Մովսես Կաղանկատվացուց բացի, այդ մասին պատմում են նաև Ղեոնզը և Վարդան Բարձրբերդյան:

Ավելորդ չենք համարում մեջ բերել նրանց վկայությունները: Ահա թե ինչ է հաղորդում Ղեոնզը. «Եւ գումարեալ իշխանն Իսմայելի զօրս անթիս՝ կարգէր ի վերայ նորա զօրավար զնոյն այր, զորմէ վերագոյնն ասացաք: Եւ առաքէ զնոսա բազմութեամբ ի վերայ երկրին Յունաց: Որոց երթեալ հասանին ի վերայ երկրին Գաղստացոց և պաշարէին զքաղաքն լայնանիստ, որ անվանեալ կոչի Ամուրիա»¹⁴: Այս արշավանքը տեղի է ունեցել Մահդի Մահմեդ իբն Մանսուր (775—785) խալիֆի օրոք և անհաջողությամբ ավարտվել: Այդ մասին Ղեոնզը գրում է. «...Եւ նստեալ զնովաւ բազմութեամբ զօրացն՝ պաշարեալ պահէին զնա ամիսս Գ, այլ ոչ կարէին ստնանել: Քանզի պարսպաւ էր ամրացեալ, և ոչինչ նուազ զգուշութիւն մատուցանէին շուրջն: Քանզի շուրջ զքաղաքան բղխէին ակունք Սազառիս գետոյ, որով ի ճախճախուտ տղմոյն անկուռելի մնայր հաստահարկ դիրք քաղաքին. և ոչ ինչ կարէին վնասել, այլ նստեալ միայն պահէին... թողին և զօրքն Իսմայելի զքաղաքն Ամուրիա ի պաշարմանէն, և գնացին յաշխարհ բնակութեան իւրեանց»¹⁵:

¹¹ Annales quos scripsit Abu Djafar Mohammed Ibn Djarir at Tabari cum aliis ed. M. J. de Goeje. Lugd. Bat. 1879, III, p. 1236—1256.

¹² Ամորիան այդ ժամանակ շատ բարգավաճ և վաճառաշահ քաղաք էր: Հայտնի է, որ այդ ժամանակ Բյուզանդիայի գահը զբաղեցնում էին Ամորիական հարստության ներկայացուցիչները, ժագումով Ամորիա քաղաքից, որոնք հատուկ ուշադրություն էին դարձնում հայրենի քաղաքի վրա: Ըստ արաբ պատմիչների՝ նա շատ ամուր պարիսպներ ունեւ, որոնց վրա իջնում էին 44 աշտարակներ: Ինչպես վկայում է Տարարին, Մութասիմը հրամայել էր, որ իր բոլոր զինվորների վահանների վրա գրված լինի «Ամորիա» (Տարարի, նշվ. աշխ., էջ 1237):

¹³ Այս արշավանքի մասին մանրամասն տե՛ս Ա. Ա. Васильев, Византия и арабы, С.Пб., 1900, стр. 113—146.

¹⁴ Մատմութիւն Ղեոնզեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 157:

¹⁵ Նույն տեղում, էջ 157—158:

Իսկ Վարդան Բարձրբերդցին հետևյալն է գրում. «Եւ Կրթայ Ափշինն յերկիրն Յունաց, յաղթե կայսերն, առնու զԱմուրրա քաղաք. և դերեալ զնա՝ դառնայ խաղաղութեամբ»¹⁶,

Ինչպես տեսնում ենք, Վարդան Բարձրբերդցին թեև տեղյակ չէ, որ Մուսիմ Խալիֆն անձամբ ինքն է գլխավորել արաբական վիթխարի բանակը, բայց ճիշտ է, որ Աֆշինն էլ մասնակցել է այդ արշավանքին և արաբական գործի գլխավոր հրամանատարներից մեկն էր:

Հայ պատմիչների այս տեղեկությունները, որ քաղված են իրարից բոլորովին տարբեր աղբյուրներից, շնայած որոշ տարբերություններին, հիմնականում ճիշտ են և լրացնում են միմյանց,

Այս բոլորից հետո թվում է, թե կասկածից դուրս է, որ «Աղվանից աշխարհի պատմության» մեջ հիշատակված «Եմուրիան», Ղևոնդի «Ամուրիան» և Վարդան Բարձրբերդցու «Ամուրիան» միևնույն քաղաքն են: Ուրեմն սխալվում է Վ. Առաքելյանը, երբ մի քաղաքի փոխարեն առաջարկում է մի ուրիշ քաղաք, որոնք թե՛ տարածության մեջ, թե՛ անվան գրությամբ և թե՛ արտասանությամբ այնքան հեռու են իրարից, որոնք գարում ապրող Պալմիրայի թագուհի Ջենոբիան (և ո՛չ թե բյուզանդական կայսրուհի, ինչպես Վ. Առաքելյանն է կարծում) և Եփրատի ափին նրա կառուցած Ջենոբիա քաղաք-ամրոցը ոչ մի կապ կամ առնչություն չունեն V դ. վերջին Ջենոն (474—491) կայսեր կառուցած Ամորիա, Ἀμόριον, Amorium (որի արաբական ձևն է 'Ammūriyya, սիրիականը՝ Amūrīn) քաղաքի հետ, որ գտնվում է Փոյուզիայում, Սանգարիս գետի ափին, Անկարայից հարավ-արևմուտք¹⁷:

Հետևություն. «Աղվանից աշխարհի պատմության» բնագրի «Եմուրիան» պետք է թողնել «Եմուրիա»:

ЗЕМОВРИА, ЗЕНОБИА ИЛИ ЕМОРИА?

Ш. В. СМБАТЯН

Резюме

В 20-й главе третьей книги «История страны Алуанк» Мовсеса Каланкатуаци кратко рассказывается об известном походе халифа Мутасима в 838 г. в Византию и о взятии города Амория. Переводчик данного памятника на ашхарабар В. Аракелян искажил название этого города. Вместо Եմուրիա (Емория) в рукописях в его переводе читаем Զեմուրիա (Земовриа). В подстрочном же примечании, со ссылкой на Прокопия Кесарийского, он пишет: «должно быть: «Зенобна», что на берегу реки Евфрат». Это недоразумение. Прокопий Кесарийский не дает никаких оснований для подобного утверждения. В тексте «Истории страны Алуанк» название данного города следует оставить так, как в рукописях—Եմուրիա (Емория).

¹⁶ «Մեծին Վարդանայ Բարձրբերդցու Պատմութիւն տիեզերական», Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 109:

¹⁷ Encyclopedie de L'Islam, I, Paris, 1960, p. 462.